ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր **20-ը սեպտեմբերի 2024թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Դավիթ Հարությունյանը, Արմեն Վարդանյանը, Ծովինար Հովհաննիսյանը, Մուշեղ Ներսիսյանը, Կարեն Մանասերյանը, Սոնա Մարգարյանը, Եղիշե Նազարյանը, Մարատ Շահբազյանը և Վահե Վարդանյանը

Նիստին մասնակցում էին՝

Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Քրիստինե Պողոսյանը և քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնգետ Սամվել Այվազյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Ավագյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը

Լսեցին.
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ **ավագանին որոշեց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 20-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 20-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Դրամական օգնություն տրամադրելու մասին:

3) «Եղեգնաձոր համայնքի թիվ 1 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ուսումնադաստիարակչական աշխատանքները ժամանակավորապես համայնքային ենթակայությամբ գործող մյուս մանկապարտեզներում կազմակերպելու համար թույլտվություն տալու մասին:

4) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ թիվ 43-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

5) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 136-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

6) Քաղաքացի Աստղիկ Մկրտչյանի դիմումը քննարկելու և տեղական վճարի գծով արտոնություն սահմանելու մասին:

7) Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի 28-րդ փողոցից սկսվող փողոցները համարակալելու մասին:

8) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարելու մասին:

9) Համայնքային սեփականություն հանդիսացող 0.00328 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

10) Հողի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

11) Համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

12) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

13) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84-Ա/

Լսեցին.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՔՐԻՍՏԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ 37-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ, 43-րդ կետերը և համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող հանձնաժողովի եզրակացությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից հատկացնել դրամական օգնություն՝

1) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի

2) Եղեգնաձոր բնակավայրի բնակիչ Հայկ Սեխլիյանի ընտանիքին՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես աջակցություն բուժման ծախսերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Լսեցին.

«ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՄՅՈՒՍ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի թիվ 95-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի արձանագրությունը, այն հանգամանքը, որ Եղեգնաձոր քաղաքի Միկոյան փողոց թիվ 7 հասցեում գտնվող «Եղեգնաձոր համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքը գտնվում է երրորդ աստիճանի վթարային վիճակում և նշված շենքում վտանգավոր է իրականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքներ, ինչպես նաև համայնքային ենթակայությամբ գործող՝ «Եղեգնաձոր համայնքի թիվ 2 մսուր մանկապարտեզ», «Եղեգնաձոր համայնքի թիվ 5 մանկապարտեզ» և «Գլաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ների տնօրենների համաձայնությունը՝ **ավագանին որոշեց**.

1. Տալ թույլտվություն՝ «Եղեգնաձոր համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ուսումնադաստիարակչական աշխատանքները ժամանակավորապես կազմակերպելու համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզ ՀՈԱԿ-ներում՝ մինչև նոր տարածքի տրամադրումը, ընդ որում՝

1) ավագ խմբերի ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպել «Եղեգնաձոր համայնքի թիվ 2 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի՝ քաղաք Եղեգնաձոր Կոմիտասի 13 հասցեում գտնվող շենքում,

2) միջին խմբի ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպել «Եղեգնաձոր համայնքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի՝ քաղաք Եղեգնաձոր Վարդան Զորավարի փողոց, թիվ 35 շենքում,

3) կրտսեր խմբի ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպել «Գլաձորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի՝ Գլաձոր բնակավայրի փողոց 33 փակուղի 2 թիվ 2 շենքում:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2024 թվականի սեպտեմբերի 16-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ԹԻՎ ԹԻՎ 43-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի՝ «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 9-ի թիվ 13-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 43-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 136-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով «Եղեգնաձորի գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենի 2024 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 07 գրությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի՝ «2024 թվականի համար Եղեգնաձոր համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 136-Ա որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2024 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88-Ա/

Լսեցին.

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՍՏՂԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով, քննարկելով «Եղեգնաձորի գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենի կողմից ներկայացված՝ քաղաքացի Աստղիկ Մկրտչյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. «Եղեգնաձորի գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ հաճախող Անի, Իննա և Նիկա Մարտիրոսյանների տեղական վճարի (վարձավճար) նկատմամբ սահմանել արտոնություն՝ դրույքաչափի 50 տոկոսի չափով նվազեցում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2024 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 28-ՐԴ ՓՈՂՈՑԻՑ ՍԿՍՎՈՂ ՓՈՂՈՑՆԵՐԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի

դեկտեմբերի 29-ի N 1387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետը, Գետափ բնակավայրի 28-րդ փողոցից սկսվող փողոցների մասով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտերը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի 28-րդ փողոցից սկսվող՝

1) 1-ին նրբանցքին զուգահեռ հաջորդ փողոցը համարակալել որպես՝ Եղեգնաձոր համայնք, գյուղ Գետափ, 28-րդ փողոց, 2-րդ նրբանցք,

2) 1-ին և 2-րդ նրբանցքներին զուգահեռ հաջորդ փողոցը համարակալել որպես՝ Եղեգնաձոր համայնք, գյուղ Գետափ, 28-րդ փողոց, 3-րդ նրբանցք,

3) 1-ին փակուղուց սկսվող փողոցը համարակալել որպես՝ Եղեգնաձոր համայնք, գյուղ Գետափ, 28-րդ փողոց, 2-րդ փակուղի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում էլեկտրոնային եղանակով Կադաստրի կոմիտեի հասցեների միասնական ռեեստրի տեղեկատվական համակարգ ներբեռնելու պահից:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90-Ա/

Լսեցին.
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարել՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91-Ա/

Լսեցին.
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.00328 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Մելանիա Հարությունյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի Միկոյան փողոց 10/3 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 10-001-0051-0070 կադաստրային ծածկագրով, 0.00328 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, ավտոտնակով ծանրաբեռնված հողամասն ուղղակի վաճառքով օտարել քաղաքացի Մելանյա Մաթևոսի Հարությունյանին:

2. Վաճառքի գին սահմանել 145 700 (մեկ հարյուր քառասունհինգ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդ օրվանից:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92-Ա/

Լսեցին.
ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և քաղաքացու դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի 47-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող, հանգուցյալ Լարետ Հայրիկի Մուսիկյանին հատկացված, շինությամբ ծանրաբեռնված, 0.01074 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողի (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-) նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման փոփոխելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93-Ա/

Լսեցին.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և այն հանգամանքը, որ նշված հողատեսքը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 0.25590 հա մակերեսով արոտավայր հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0220-0001) վարելահող հողատեսքի փոփոխելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ա/

Լսեցին.

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064 որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 9-ի N 2/փ-363 դրական եզրակացությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Քաղաքացի Գոհար Ռազմիկի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող, Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, գյուղատնտեսական նշանակության 0.94993 հա մակերեսով այլ հողատեսքից (անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 02092022-10-0011 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0892) 0.06361 հա-ի նպատակային

նշանակությունը փոփոխել բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Լսեցին.
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ **ավագանին որոշեց.**

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշել՝ 2024 թվականի հոկտեմբերի 18-ը, ժամը՝ 18:15-ը, նիստի անցկացման վայրը՝ Եղեգնաձորի համայնքապետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Նիստին ներկա ավագանու անդամներ

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐՅԱՆ _____

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Մարինե Հովհաննիսյանը

_____